## ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

---

Հոկտեմբեր 18. Սինօդը հիմնուելով Ղարաբաղի Հայոց Կոնսիստորիայի յայտարարութեան վերայ, 25 հոկտ. թ. 1766, հաստատեց Կոնսիստորիայի եզրակացութիւնը Յովհաննէս քահանայ Աւշարեանցին ենթարկելով 25 րուբլի տուգանքի և եռամսեայ ապաշխարանքի, որովհետև առանց օրինական թոյլտուութեան փառահացել է կատարել երկու չհաս պսակ։

—

Հոկտեմ. 28 1894 թ. Սինօդը ունենալով ի նկատի Կովկասեան ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուի գրութիւնը ի 28 յուլիսի թ. 5912, հրամայեց Պեատիգորսկ քաղաքի բարեկ. Աբրահամ քահանայ Շխինեանցին, հայ մանուկներին ժողովելով եկեղեցու գաւիթը ծնողաց համաձայնութեամբ, սովրեցնել նրանց հայոց լեզու, որպէս զի կարող լինեն ժամանակին սովորել կրօնը մայրենի լեզուով, որովհետև նոյն պրօգիմնազիայի աշակերտները լինելով լեռնական Չերքեզահայք և անծանօթ հայոց լեզուին՝ դժուարանում են սովորել հայոց կրօնը։

—

Հոկտ. 30. Սինօդը ըստ թոյլտուութեան գլխաւոր կառավարչապետի քաղաքական մասին Կովկասի գրութեամբ 9 նոյեմբ. թ. 10194 թոյլատրեց մկրտել Զառօ Գալօ օղլուն և ընդունել ի գիրկ հայաստանեայց ս. եկեղեցու։

—

Դեկտեմբ. 2 Սինօդը Սեւաստոպօլի քաղաքի նահանգական դատարանի պրօկուրօրի գրութեան համաձայն յ9 յուլիսի թ. 4519՝ պատուիրեց Աստրախանի Կոնսիստորիային հրաւիրել հանգուցեալ Մարգար Փօպովի կտակարարներին այն է՝ Տիկին Եւդոկեային, պ. Գաւիթ Փօպովին և բժիշկ պ. Մանուէլեանցին, որ հանգուցեալի կտակի մասը համաձայն յանձնեն արքունի բանկին 50,000 ր. և բանկային տոմսակը ներկայացնեն Սինօդին, այլ և ի նկատի ունենան որ երբ ստացուի Սինօդի Նովգորոդի հայոց եկեղեցու պարսպի նորոգութեան թոյլտուութիւնը, պահանջել նոյն կտակակատարներից 3000 ր. ի նպաստ նոյն շինութեան։ Իսկ օրագրի պատճէնը մատուցանել Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետին ազգիս ի գիտութիւն և ի տնօրէնութիւն, որովհետև հանգուցեալը յիշեալ գումարը 50,000 ր., որ թողած էր Նորին Օծութեան բարեհաճ կամաց բաց անելու և պահպանելու հայոց դպրոց, ուր և հաճի Նորին Օծութիւնը։

—

Դեկտեմ. 12. Սինօդը Վեհափառ Հայրապետի բարեհաճ կամաց համաձայն, բարեշնորհ Լեւոն վարդապետ Խօջայեանին կարգեց օգնական Նոր Նախիջեւանի Ս. Խաչ վանքի վանահօր, պատուիրելով նոյն վանահօրն, հոգալ նորա սննդեան և այլ կարեւոր պիտոյից համար։

—

Դեկտեմ. 14. Սինօդը Վեհափառ Հայրապետի բարեհաճ կամաց համաձայն, յետ արձակել տալոյ ի հարկաց ընդունելոց ճեմարանի ուսանող Ռափայէլ Կարապետեան Մելիք—Ադամեանցին ի թիւս կուսակրօն միաբանից Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի։

—

Դեկտեմ. 15 Սինօդը Վեհափառ Հայրապետի բարեհաճ կամաց համաձայն, բարեշնորհ Անտօն վարդապետ Վարդազարեանցին արձակելով Մայր Աթոռոյ ագարակի վերատեսչութիւնից, կարգեց վանահայր Գանձասարու վանից, պատուիրելով Ղարաբաղու հայոց Կոնսիստորիային, որ նոյն վանից բոլոր գոյքը և կալուածքները պատշաճաւոր ցուցակաւ յանձնէ նոյն վարդապետին, իսկ ագարակի վերատեսչութեան պաշտօնը ժամանակաւորապէս յանձնեց բարեշնորհ Գեղամ վարդապետ Բաղջանեանցին ըստ տնօրէնութեան Նորին Օծութեան։

—

Դեկտ. 16. Սինօդը Դարաշիչակի գործակալ բարեշնորհ Միքայէլ արեղայ Տէր Մինասեանցի, յանուն Վեհ. Հայրապետի տուած

յայտարարութեան հիման վերայ, որը Նորին Օծութիւնը ի 28 Դեկտ. Թ. 1894 յանձնել էր Սինոդին, արձակեց նորան գործակալութեան պաշտօնից և նոյն պաշտօնը յանձնեց Նոր-Բայազիտու գործակալ բարեշնորհ Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանցին որ նա իւր պատասխանատուութեամբ Գարաչիչակի բանիմաց եկեղեցականներից մէկին իրեն օգնական ունենալով կատարէ գործ. պաշտօնը։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.


I ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ
ԼՈՅՍ ԵՒ ԽԱՒԱՐ . . Կ. Ա. . . 1
ՄԾՂՆԷԻՑ ԱՂԱՆԴԸ . . . . 3
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ . Ն. Ք. . . 8
ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ . . . . . 10

II ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ
14-ին ՅՈՒՆՈՒԱՐԻ (բանաստ.) Յ. Յովհաննիսեան 11
ՀԻՆ ՀԱՅ ԵՐԳԻՉՆԵՐ . . Ն. Քարամեանց 12
ԱՌԱԾՆԵՐ ՎԱՆԱՑ ԲԱՐԲԱՌՈՎ Ս. Հայկունի 16
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ . Մ. Բերբերեան 17
ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ . Փիմի . . 21

III ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
Ն. ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ Ե. Ճ. . . 23
ԺՈՂՈՎԱԼՈՅՑԻ ԵՐԵԿՈՅ (թարգմ.) Մ. Բ . . 27
ՄԱՆՐԱԼՈՒՐՔ . . . . . 28

IV ԱԶԳԱՅԻՆ
ԱՐԱՐԱՏԻ ԻԲ. ՏԱՐԵՄՈՒՏԸ . . . . 30


## ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ


1. ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԻՒՆ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ . 32
2. ՄԱՅՐ - ԱԹՈՌ . . . . . 33
3. ՌՈՒՍԱՀԱՅՔ . . . . . . 35
4. ՏԱՃԿԱՀԱՅՔ . . . . . . 36
5. ՊԱՐՍԿԱՀԱՅՔ . . . . . . 37
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ . . . . . . . .
1. ԴԻՒԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
2. ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . . . . . . 40


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

### ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՏՊԱՐԱՆԻ ՎԱՃԱՌԵԼԻ ԳՐՔԵՐԻ ՑԱՆԿԸ.

Ր. Կ.

Ատենի ժամագիրք, որ է մատեան հասարակաց աղօթից Բ-րդ տպագր. 1891 Թ. 8 —
Աւետարան Տ. Մերոյ Յիսուսի Քրիստոսի (ճաշու աւետարան) 1890 Թ. 3 —

Ր. Կ.

Աւետարան (փոքրադիր) 1891 Թ. — 70
Աւետարան խաղաքերից 1892 Թ. 1 50
Աստուածաբանական գիտութիւններ Ա. Տ. Միքելեան 1893 Թ. — 50
Աստուածպաշտութիւն Հայաստ. Եկեղ. Ս. ա. քհ. Մանդինեան 1870 Թ. — 70
Անանիա Նարեկացի գիրք խոստովանութեան (միաբան) 1892 Թ. — 50
Աբրահամ Կաթողիկոս Կրետացի 2 —
Աղանդաւորք եւ Մոլորութիւնք նոցա ի վարդապետութիւնս Հաւատոյ Ռ. եպս. Դաւթեան 1890 Թ. — 20
Այրի վանք, կամ Նկարագրութիւն Գեղարդայ վանից (Վ. Մանկունի) — 10
Աղբիւր Բացեալ Գ. եպս. Բերտումեան 1890 Թ. — 20
Բուսաբանութիւն (բժ. Գ. Տ. Գրիգորեան) — 15
Բագրեւանդ եւ Ջրաբաշխ գաւառ Ս. Հայկունի 1 50
Բաղդատական Աշխարհագրութիւն (Պետերբուրգի Հայ ուսանողներ) — 50
Գիրք Հերձուածոց (միաբան) 1892 Թ. — 50
Գիրք Խոստովանութեան (միաբան) — 50
Գիրք Հանդիսակատարութեան կայսերական տօնից 1894 Թ. — 50
Դասագիրք կրօնի Ա. տ. — 15
" նոյն Բ. տ. (Յ. վ. Մովսիսեան) — 20
" " Գ. տ. — 30
Դեօլլինգերի Նամակները (թարգ. Հ. Խաչվանքեան) — 50
Դասագիրք Քրիստ. վարդապետութեան (Արել Արք-եպիսկոպոսի) — 10
Դասագիրք Հայկական Ձայնագրութեան (Ն. Թաշճեան) 1874 Թ. — 50
Երգք Հոգեւորք համաձայնեալք յԵկեղեցական գրոց. Բ-րդ տպ. Վ. ք. Մամիկոնեան 1891 Թ. — 50
Երգք Ձայնագրեալ ի ժամագրոց Հայաստանեայց Եկեղ. 1872 Թ. 4 —

(Շարունակելի.)